


ՔԱՐՈՒԱԿ

Արման Ռևազյան

“Բառաքնական մի դիտողություն”

21.04.2003 Երեվան

“Բառաքնական մի քանի դիտողություններ “ հոդվածում Լ.Շ.Հովհաննիսյանը քննության է առնում քարուակ, քարուականք բառը:



Նրա եզրակացությունը հետևյալն է. “Մեր կարծիքով բառի քար և վակ (ուակ) բաղադրիչները իրանական ծագում ունեն: Առաջինը իրան. kar “գործ” արմատն է, որը առկա է հայերենի իրանական մի շարք փոխառություններում ապիկար, կարաւոր, պայքար, քարտար (կ-ք հնչյունափոխությունը օրինաչափ է, բացի դրանից ք-ով ձևերը ժամանակագրորեն ավելի նոր են): Մի խոսքով,

այդ արմատը բավական հաճախակի է հայերենում ներկայանալով նաև իմաստային նրբերանգներով, որ գալիս է դեռևս փոխատու լեզվից: **Քարուակ, քարուկանք**-ի բացասական իմաստը տալիս է բաղադրության երկրորդ՝ **ուակ** բաղադրիչը, որը մեր կարծիքով իրանական *vak* “**խոսք, ասել**” արմատն է: Ենթադրելի է, որ նախնական իմաստը եղել է “**խոսքի առարկա դարձած գործ, վատ, ամոթալի գործ**”:

Ահա այս ենթադրության վրա է հիմնվում այն պնդումը թե քարուակ, քարուականք բառը իրանական ծագում ունի:

Սակայն, կարիք չկա խոսել իրանական կ-ք հնչյունափոխության օրինաչափության մասին, երբ կարիք կա խոսել հայոց ր-ռ հնչյունափոխության մասին, որը և ստեղծում է նոր իմաստային երանգներ: Այսպես քար-ը դառնում է քառ, որ “քառասուն” թվանշանի արմատն է, որը անշուշտ կապված է **չորս** թվանշանի հետ, իսկ վերջինս ծագում է **Վ Կ չր-չռ** կոնսոնանտ արմատի հետ, որից նույնպես ծագում են **չար** ու **չոռ** բառերը և հենց այստեղից է, որ **քարուակ**-ը ունի բացասական նշանակություն և, ոչ մի կարիք չկա եզրակացություններ կատարել՝ հիմնվելով իրանական բառի ենթադրյալ նշանակության վրա:

Նախաքրիստոնեական (արամեական, փյունիկյան կոչված) հայոց այբուբենում **Վ** տառանշանը, որը Մ.Մաշտոցի կողմից ներմուծվել է **չ** ձևով, միաժամանակ, ներկայացրել է և **չար, չարիք** հասկացողությունը, և **չորս** թվանշանը, որը արտասանվել է և **քառ** ձևով, ինչը և ապացուցվում է **քառասուն** թվանշանի գոյությամբ:

Հետևապես՝ ժամանակին **չար** և **քառ** բառերը հոմանիշներ են եղել:

Այսպիսով, ոչ միայն ապացուցվում է **քարուակ, քարուկանք**-ի բուն հայոց բառ լինելը, պարզվում է ոչ միայն նրա բացասական իմաստի պատճառը, այլ և այն թե ինչու է **չորս**-ը երկնիչ թվանշանների շարքում արտասանվում իբրև **քառասուն**:

Եթե հաշվի առնենք, որ գոյություն ունի տրամաչափություն

Երեք – երեսուն

Հինգ – հիսուն

Վեց – վաթսուն

Յոթ – յոթանասուն

Ութ – ութսուն

Ինը – իննսուն,

որից դուրս են մնում այս երեքը

Մեկ – տաս

Երկու – քսան

Չորս – քառասուն,

ապա կարելի է ենթադրել, որ մեկ – տասս և երկու – քսան զույգերը, չորս- քսաասուն զույգի նման, պետք է որ ունենան իրենց բացատրությունը:

Տես նաև:

ՔԱՐՈՒԱԿ, Ի-ա հլ. «խայտառակ, ամօթալի» Ոսկ. կողոս. 604. որից ֆարուակ կալ «ամօթալի գործով խայտառակուիլ» Ոսկ. մ. ա. 15, բ. 6. ֆարուականութիւն Ոսկ. մ. ա. 13, բ. 24. ֆարուականֆ Ոսկ. մ. ա. 15. բ. 23, որից և Սարգ. յկ. ը. բ. տպ. էջ 108: Հիւնք. ֆար բառից:

Հրաչնայ Աճառնան: Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 1926:

⊙ ՔԱՐՈՒԱԿ, ամ. Ամօթալից, խաղք ու խայտառակ: ⊙ Ք ա ր ու ա կ կ ա լ, Խաղք ու խայտառակ լինել:

Մտնփան Մալխասնանց: Հայկական ՄՍՈՒ Պնտախան Հրատարակչություն, Երևան, 1944:

ՔԱՐՈՒԱԿ, ա. Խաղք ու խայտառակ, ամօթապարտ. ամօթալի:
– **ՔԱՐՈՒԱԿ ԿԱԼ. Ամօթալի գործով խայտառակուել, խաղք ու խայտառակ լինել:**
ՔԱՐՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ, | գ. Ամօթալի
ՔԱՐՈՒԱԿԱՆՔ, | գործ, խայտառակութիւն, տգեղ՝ անվայել գործեր:

Ռուբէն Սնրոբի Ղազարնան: Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 2000:

**Քարուակ, ա. խաղք ու խայտառակ. 3 բէ-
-Քարուակ կամ. ամսթալի գործքով խայ-
տառակ ըլլալ:**

**Քարուականութի } գ. խաղքութիւն, խաղք
Քարուականք } բան, տգեղ կամ գէշ
գործք. 3 այլալ շէյ:**

Ն. Մերտիչ Աւգերման եւ Ն. Գրիգոր Ճէլալման: Մուրք
Ղազար, Ղիննաիկ, 1865:

**ՔԱՐՈՒԱԿ, ա. Ամսթապարտ, խայտա-
ռակ, ամսթալի:**

Ռուբէն Մերոբի Ղազարման: Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2006: